ՆԱԻՐԱ ԵՐԿԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԸՍՏ ՏԵՍՈՒԹՅԱՆ)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.264

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից կրթական պահանջների համատեքստում պատմության ուսուցումը դիտարկվում է ոչ թե որպես փաստերի մեխանիկական փոխանցում, այլև սովորողների քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների և պատմական «ապրումակցման» զարգացման միջոց: Սույն հոդվածը նպատակաուղղված է ավագ դպրոցում պատմության դասավանդման գործընթացում պատմական սկզբնաղբյուրների կիրառման մեթոդաբանական առանձնահատկությունների տեսական և գործնական հիմնավորմանը:

Արդյունքում բացահայտվել է, որ պատմական սկզբնաղբյուրների հետ համակարգված և աստիճանակարգված աշխատանքը պատմության դասը փաստերի պարզ փոխանցումից տեղափոխում է դեպի պատմական գիտելիքի գիտակցված կառուցում, ինչը հնարավորություն է տալիս լրացնելու մեթոդաբանական բացը և ապահովելու անցումը դեպի կարողունակահեն ուսուցում: Հոդվածում նաև շեշտադրվում են ՀՀ-ում գործող հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) վերջնարդյունքների և առանցքային կարողունակությունների զարգացմանն ուղղված միտումները՝ հիմնավորելով, որ սկզբնաղբյուրների հետ հետազոտական աշխատանքը նպաստում է սովորողների ինքնաճանաչողական հմտությունների զարգացմանը, քաղաքացիական գիտակցությանը և մեդիագրագիտությանը:

Հոդվածում ներկայացված մեթոդաբանական մոդելը հենվում է պատմական մտածողության միջազգային հասկացությունների վրա՝ առաջարկելով

աղբյուրների արտաքին և ներքին քննադատության հարցադրումների համակարգ: Այն թույլ է տալիս լրացնել հայկական կրթական համակարգում առկա մեթոդաբանական բացը և ապահովել անցումը դեպի կարողունակահեն ուսուցում:

Բանալի բառեր և արտահայտություններ. ավագ դպրոց, պատմության ուսուցում, աղբյուրներ, առաջնային և երկրորդական աղբյուրներ, աղբյուրի ընթերցում և վերլուծություն, սկզբնաղբյուրային կիրառություն, մեթոդաբանական առանձնահատկություն, տեսական և գործնական մոտեցում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգում պատմության դասավանդման նպատակը վաղուց անցել է սահմանված տարեթվերի և փաստերի մեխանիկական փոխանցման սահմաններից: ՀՀ-ում գործող հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) նոր փոփոխություններով հստակ պահանջներ է սահմանվում միջնակարգ դպրոցի ծրագրի շրջանավարտների համար, որոնք անմիջականորեն առնչվում են պատմական սկզբնաղբյուրների հետ աշխատանքի մեթոդաբանությանը: Մասնավորապես չափորոշիչը շեշտադրում է աշակերտի՝ տեղեկության աղբյուրներն օգտագործելիս ակադեմիական ազնվություն պահպանելու կարևորությունը: Այս համատեքստում պատմական սկզբնաղբյուրների կիրառումը դառնում է առանցքային գործիք, որը թույլ է տալիս սովորողին ոչ միայն ստանալ տեղեկատվություն, այլև զարգացնել հետազոտական հմտություններ:

Նոր վերջնարդյունքների համաձայն՝ ավագ դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա առաջադրել հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ՝ վերլուծելով ստացված տվյալներն առկա գիտելիքի ու պատմական համատեքստի շրջանակում, ինչպես նաև կարողանա համեմատել և վերլուծել հասարակական, քաղաքական երևույթների ու գործընթացների տարբեր մեկնաբանություններ՝ ձևավորելով հիմնավորված և փաստարկված դիրքորոշում, քննադատաբար ընկալել տեղեկատվությունը, տարբերակել մանիպուլյացիաները և հասկանալ ուղերձների

ստեղծման մեխանիզմները: Այս պահանջները լիովին համահունչ են հոդվածում դիտարկվող մեթոդաբանական մոտեցումներին:

Ակնհայտ է, որ պատմության ուսուցումը պետք է նպաստի սովորողների քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների, նաև՝ պատմական ըմբռնման և մեդիագրագիտության ձևավորմանն ու զարգացմանը: Այս համատեքստում պատմական սկզբնաղբյուրները՝ քարտեզներ, արձանագրություններ, հրովարտակներ, նամակներ, դառնում են բազմաշերտ ուսուցման գործիքներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է պատմական մտածողության միջազգային հայեցակարգերի և ՀՀ պետական կրթական չափորոշիչների համադրման վրա: Այն կիրառում է սկզբնաղբյուրների քննադատական վերլուծության փուլային մոդելը՝ ներառելով արտաքին և ներքին քննադատության մեթոդները: Տեսական հիմքում ընկած են Մարկ Բլոկի, Պիտեր Սեյքսասի և Սեմ Ուայնբուրգի մոտեցումները, ինչպես նաև Կոնգրեսի գրադարանի (Library of Congress)-ի և այլ մեթոդական ուղեցույցները: Այս համակարգը հնարավորություն է տալիս պատմության դասավանդումը փաստերի պարզ փոխանցումից վերափոխել սովորողների վերլուծական հմտությունների և մեդիագրագիտության զարգացման գործիքի:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պատմական աղբյուրների տեսակները

Պատմական աղբյուրները դասակարգվում են առաջնային և երկրորդական: Տարբերությունն այն է, որ առաջնային աղբյուրներն ուղղակիորեն վկայում են իրադարձությունների մասին, իսկ երկրորդականներն ավելի շատ դրանց մեկնաբանություններն ու վերլուծություններն են: Այսպես.

առաջնային սկզբնաղբյուրը հանդիսանում է որևէ իրադարձության, ժամանակաշրջանի կամ թեմայի մասին առաջնակի ստացված գրառում, որը գրվել կամ ստեղծվել է անմիջապես այդ իրադարձության ժամանակ կամ դրա

ականատեսի, կամ մասնակցի կողմից: Դրանք ծառայում են որպես տեղեկատվության սկզբնական աղբյուր և կարող են լինել բազմաթիվ ձևաչափերի՝ ներառյալ փաստաթղթեր, օրագրեր, նամակներ, ձեռագրեր, արվեստի առարկաներ, վիճակագրական տվյալներ կամ ձայնագրություններ: Չնայած որոշ դեպքերում դրանք ներառում են ավելի ուշ փաստաթղթավորված հուշագրություններ կամ բանավոր պատմություններ՝ այնուամենայնիվ, հետազոտության համար ամենաարժեքավորը համարվում են իրական իրադարձության ժամանակին ամենամոտ ստեղծված աղբյուրները (**Library of Congress, 2020**):

Առաջնային աղբյուրները կարելի է բնութագրել այսպես՝ աղբյուրներ, որոնք առավել մոտ են տեղեկատվության ծագմանը: Դրանք պարունակում են չվերծանված և չմշակված տեղեկատվություն, ինչն էլ անհրաժեշտ է, որպեսզի մեկնաբանեն հետագա հետազոտողները (**Where are Primary Sources?**):

Երկրորդական աղբյուրները ստեղծվել են ինչ-որ մեկի կողմից, անմիջականորեն չեն առնչվել կամ չեն հանդիսացել դիտարկվող իրադարձությունների ականատեսի վկայություն: Կարելի է ասել, որ երկրորդական աղբյուրները մեկնաբանում, վերլուծում են առաջնային աղբյուրները: Այս աղբյուրները մեկ կամ մի քանի քայլ հեռացված են ուսումնասիրվող իրադարձությունից, այդ պատճառով էլ հաճախ առաջարկում են առաջնային աղբյուրների վերլուծություն, մեկնաբանություն կամ վերաձևակերպում: Դրանք ներառում են ընդհանրացումներ, մեկնաբանություն, որևէ իրադարձության կամ կերպարի գնահատում, ինչի օգնությամբ երբեմն փորձում են նկարագրել կամ բացատրել առաջնային աղբյուրները: Երկրորդական աղբյուրները կարող են նաև մեկնաբանել առաջնային աղբյուրները (**What are the differences?** // https://crk.umn.edu/library/primary-secondary-and-tertiary-sources):

Ելնելով մեր ուսումնասիրությունից՝ կազմել ենք առաջնային և երկրորդական աղբյուրների դասակարգման հետևյալ աղյուսակը.

Առաջնային սկզբնաղբյուրներ	Երկրորդական աղբյուրներ
• փաստաթղթերի բնօրինակներ • օրագրեր, նամակներ • հնագիտական արտեֆակտներ • արձանագրություններ, ձեռագրեր • դրամներ, գտածոներ • ինքնակենսագրություններ • Լուսանկարներ • ծաղրանկարներ • պաշտոնական, պետական փաստաթղթեր • տվյալ ժամանակաշրջան թերթ կամ ամսագրային հոդվածներ • ցուցապաստառներ • ճանապարհորդների վկայություններ • հարցազրույցներ, ելույթներ • բանավոր պատմություններ • քարտեզներ	• կենսագրություններ • գրքեր/մենագրություններ • բառարաններ • հանրագիտարաններ, դասագրքեր • վերլուծական և մեկնողական գրքեր • քաղաքական մեկնաբանություն • կենսագրություններ այլոց մասին • պատմագրական երկեր • ամսագրային հոդվածներ • վերլուծական ուսումնասիրություններ • գրախոսություններ և էսսեներ

Առաջնային աղբյուրներն օգնում են աշակերտներին հասկանալ պատմական իրադարձությունները և դրանից բխող հասարակական արձագանքները։ Նամակները և փաստաթղթերը բացահայտում են մարդկանց զգացմունքներն ու քաղաքական գործընթացները, ծաղրանկարները՝ հասարակական վերաբերմունքը, իսկ լուսանկարները և վկայությունները՝ անմիջական տեղեկություններ։ Իսկ հնագիտական գտածոների ուսումնասիրությունն ու քննադատական վերլուծությունը սովորողին դարձնում են գործուն հետազոտող և նպաստում խորքային մեկնաբանությանը։

Այսպիսով, տարատեսակ սկզբնաղբյուրների օգտագործումը ուսումնական գործընթացում պահանջում է կառուցվածքային և համակարգային մոտեցում, որի հիմքում ընկած է քննադատական հարցադրումների փուլային համակարգը։ Այս մեթոդաբանությունը սովորողին դարձնում է ակտիվ հետազոտող՝ ուղղորդելով նրան աղբյուրի մակերեսային ընկալումից դեպի դրա խորքային վերլուծություն և մեկնաբանություն։

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տարբերակել վերլուծության հիմնական երկու փուլերը՝

- *արտաքին (համատեքստային) քննադատություն*, որը վերաբերում է աղբյուրի ծագմանը, հեղինակին, ժամանակին և պատմական միջավայրին,
- *ներքին (բովանդակային) քննադատություն*, որը կենտրոնանում է աղբյուրի գաղափարական, արժեքային և փաստական բովանդակության վրա։

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը նպատակահարմար է սկսել պարզ և փաստական բնույթի հարցադրումներից, որոնք օգնում են պարզել աղբյուրի առաջացման համատեքստը.

- Ե՞րբ է գրվել այս փաստաթուղթը։
- Ո՞վ է հեղինակն ու ի՞նչ դիրք կամ պաշտոն է ունեցել։
- Որտե՞ղ և պատմական ինչպիսի՞ իրադարձությունների ընթացքում է այն ստեղծվել։

Այս փուլում ձևավորվում է նախնական պատկերացում աղբյուրի բնույթի և արժեքի մասին։

Հաջորդ փուլում անհրաժեշտ է անցնել ավելի խորքային վերլուծության՝ ուղղված հեղինակի մտադրությունների, դիրքորոշման և գաղափարական ուղղվածության բացահայտմանը։ Դրա համար կարող են կիրառվել հետևյալ հարցադրումները.

- Ի՞նչ վերաբերմունք է ցուցաբերում հեղինակը նկարագրված իրադարձությունների հանդեպ։

- Ինչո՞ւ է նա ընտրել տվյալ թեման։
- Ի՞նչ նպատակ կամ ազդեցություն է ունեցել առաջնային սկզբնաղբյուրը հասարակության վրա տվյալ ժամանակաշրջանում։

Այս հարցերը ենթադրում են ավելի խոր քննադատական մտածողություն՝ հնարավորություն տալով ուսումնասիրել աղբյուրի ներքո աննկատելի ենթատեքստը։ Աղբյուրները վերլուծելիս պատմաբանները հաճախ հաշվի են առնում հեղինակային կողմնակալությունը, օբյեկտիվությունը և մոտեցման բնույթը։ Բացի այդ, անհրաժեշտ է գնահատել փաստաթղթի համապատասխանությունը իրադարձություններին՝ որոշելու դրանց արժանահավատությունը։ Այսպիսի վերլուծությունը թույլ է տալիս ոչ միայն հասկանալ, թե ի՛նչ է ասում աղբյուրը, այլև՝ ինչո՛ւ է այն գրվել և ինչպե՛ս է կարող կիրառվել այլ աղբյուրների համատեքստում։ Այս մոտեցումը՝ սկսյալ պարզ հարցադրումներից մինչև բարդ վերլուծական եզրակացություններ, հնարավորություն է տալիս ստեղծելու համապարփակ պատկեր պատմական փաստերի և իրադարձությունների մասին։

Պատմական սկզբնաղբյուրների կիրառման տեսական և չափորոշչային մեթոդաբանությունը

«Մարդկային գործերից առաջին սկզբնաղբյուրներն արժանի են ուսումնասիրության»,- ասել է ֆրանսիացի պատմաբան, Աննալների դպրոցի հիմնադիր Մարկ Բլոկը (**Բլոկ Մ., 2018**)։ Գիտահեն փաստերը ոչ միայն պատմագիտական մեթոդաբանության հիմնական սկզբունքներից են, այլև կրթական խոր փիլիսոփայական արտահայտություն։ Ավագ դպրոցականների հետ աշխատանքում սկզբնաղբյուրների կիրառումը կարևոր է մի շարք հանգամանքներով. այն հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտի քննադատական-վերլուծական հմտությունները, միաժամանակ նպաստել հետազոտական ու տեղեկատվական գրագիտության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին ներառում է տեղեկատվության որոնման, գնահատման և ճիշտ հղումների տրման հմտություններ։ Բացի այդ՝ գրական-սկզբնաղբյուրային փաստաթղթերի

հետ աշխատանքը խորացնում է պատմական համատեքստի ըմբռնումը և զարգացնում պատմական «ապրումակցումը»՝ թույլ տալով աշակերտներին ավելի լավ պատկերացնել անցյալի մարդկանց կյանքը և պատմական իրողություններից բխող մի շարք հանգամանքներ:

Հետազոտության հիմնական առանցքը կենտրոնացած է այն հարցի շուրջ, թե կոնկրետ մեթոդաբանական ի՞նչ մոտեցումներով է հնարավոր սկզբնաղբյուրների հետ ավագ դպրոցականների աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպել, և ինչպե՞ս է սկզբնաղբյուրների վրա հիմնված ուսուցումը նպաստում սովորողների մոտ քննադատական-վերլուծական հմտությունների (աղբյուրների քննադատական վերլուծություն, համադրական մտածողություն) և պատմական կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ դուրս բերելով աշակերտին պասիվ սովորողի դերից:

Պատմական մտածողություն տերմինի հիմնարար սահմանումը գալիս է պատմական կրթության ոլորտի առաջատար մասնագետներ Պիտեր Սեյքսասի և Թոմ Մորթոնի կողմից, որոնք «The Big Six Historical Thinking Concepts» («Պատմական մտածողության վեց մեծ հասկացությունները») գրքում այն սահմանում են որպես «ստեղծագործական գործընթաց», ինչն էլ իրագործում են պատմաբանները՝ մեկնաբանելու անցյալի ապացույցները և «կառուցելու» պատմությունները **(Seixas P., Morton T., Colyer J., & Fornazzari S., 2013)**: Այս սկզբունքները մշակվել են ի պատասխան պատմագիտության հիմնարար հարցերի, մասնավորապես՝ «Որո՞նք են ներկա մարդկանց և անցյալում ապրած մարդկանց միջև հարաբերությունները» **(Seixas P., Morton T., Colyer J., & Fornazzari S., 2013)**:

Մասնավորապես, սկզբնաղբյուրների մեթոդական կիրառումն ապահովում է ՀՊՉ հետևյալ վերջնարդյունքների իրագործումը.

Ակադեմիական «ազնվություն» և հետազոտական գրագիտություն: Շրջանավարտը պետք է ճանաչի և պահպանի ակադեմիական «ազնվություն» տեղեկության աղբյուրներն օգտագործելիս **(ՀՊՉ, Կետ 14)**: Սա անմիջականորեն

կապված է սկզբնաղբյուրներին ճիշտ հղումներ կատարելու և տեղեկատվական գրագիտության բարձրացման հետ:

Հետազոտական հարցադրումների մշակում: Ըստ չափորոշչի՝ սովորողը պետք է առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ՝ իրականացնելով բազմակողմանի վերլուծություն (**ՀՊՉ, Կետ 11**): Այս գործընթացը համապատասխանում է սկզբնաղբյուրների հետ աշխատանքի կառուցվածքային մոտեցմանը, որտեղ աշակերտը ձևակերպում է սեփական եզրահանգումները:

Մեկնաբանությունների համադրում և բազմակարծություն: Պատմական մտածողության առանցքային տարր է հասարակական երևույթների տարբեր մեկնաբանությունների համեմատությունն ու վերլուծությունը (**ՀՊՉ, Կետ 16**): Սա զարգանում է տարբեր պատմագիտական աղբյուրների համադրման, դրանց հակասությունների ճանաչման և իրադարձությունները տարբեր տեսանկյուններից դիտարկելու միջոցով:

Քննադատական վերլուծություն և մեդիագրագիտություն: Շրջանավարտը պետք է անկողմնակալ վերլուծի հասանելի տեղեկույթը և տարբերակի մանիպուլյացիաները (**ՀՊՉ, Կետ 24 և 27**): Այն ուղղակիորեն համընկնում է աղբյուրի վստահելիության, հեղինակի կողմնակալության և թաքնված ենթատեքստի բացահայտման մեթոդաբանությանը:

Պատմական ուղու և արժեքների իմաստավորում: Վերլուծելով ազգի պատմական ուղին (**ՀՊՉ, Կետ 17**) և արժևորելով պատմամշակութային ժառանգությունը (**ՀՊՉ, Կետ 39; 41**)՝ աշակերտը զարգացնում է պատմական «ապրումակցում»: Սկզբնաղբյուրները (ձեռագրեր, նամակներ, արտեֆակտներ) հանդիսանում են այդ արժեքների անմիջական կրողները, որոնք օգնում են ավելի լավ պատկերացնել անցյալի մարդկանց կյանքը:

Մեդիա ուղերձների ըմբռնում: Հասկանալով մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը (**ՀՊՉ, Կետ 27**)՝ սովորողը կիրառում է «արտաքին քննադատության» հմտություններ՝ պարզելով աղբյուրի հեղինակին, ստեղծման ժամանակն ու նպատակը:

Այսպիսով, պատմական սկզբնաղբյուրների ներառումն ուսումնական գործընթացում ապահովում է այն համալիր կարողությունների ձևավորումը, որոնց վրա հենվում է ժամանակակից կրթական համակարգը։

Միևնույն ժամանակ, չնայած պատմական սկզբնաղբյուրների կարևորությանը և դրանց քննադատական մտածողության զարգացման գործում ունեցած դերին՝ մեթոդաբանական դաշտում, այնուամենայնիվ, դեռևս առկա են բացթողումներ։ Մասնավորապես, նկատելի է հայկական կրթական համատեքստին հարմարեցված և ժամանակակից պատմական մտածողության մոդելներով հիմնավորված կոնկրետ գործիքակազմի ու մեթոդաբանական ուղեցույցների պակաս։ Հետևաբար, մեր հետազոտական աշխատանքը հիմնականում կենտրոնացած է լրացնելու մեթոդաբանական այս բացը՝ մշակելով և հիմնավորելով պատմական սկզբնաղբյուրների կիրառման այն մեթոդաբանական առանձնահատկությունները, որոնք առավել արդյունավետ են ավագ դպրոցականների կրթական գործընթացում։

Պատմական սկզբնաղբյուրների կրթական կրթական նշանակությունը

Պատմական սկզբնաղբյուրներն ուսուցման գործընթացում կիրառելիս փոխարկվում են սովորողի համար ոչ միայն տեղեկատվության աղբյուրի, այլև՝ հետազոտական, վերլուծական և մտածողության զարգացման խթանիչ միջոցի։ Սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս աշակերտներին կապ հաստատել պատմական իրադարձությունների իրականության, առարկայության և պատմական անձանց հետ՝ դուրս գալով դասագրքային սահմաններից։ Մեթոդաբանական այս մոտեցման տեսական հիմքը դրվել է Մարկ Բլոկի կողմից։ Նա կարևորում է «հետադարձ մեթոդը»՝ պատմական երևույթները հասկանալու համար, և կատարում է հետևյալ դիտարկումը. «Ներկա երևույթների ակունքների հայտնաբերումը անցյալ երևույթներում, քանզի իրականությունը լավագույնս հասկացվում է միմիայն իր պատճառներով։ Ձննենք ներկան՝ հետ անցում կատարելու համար դեպի անցյալ» **(Բլոկ Մ., 2018)**։

Այս մոտեցումը կրթության մեջ թույլ է տալիս սկզբնաղբյուրները դարձնել արդիական՝ միաժամանակ զարգացնելով աշակերտների պատմական ըմբռնողականությունը: Բացի այդ՝ Բլոկը պնդում է, որ պատմաբանը պետք է զատորոշի «իրականության երկու ձևերի միջև»՝ շրջակա միջավայրի օբյեկտիվ փաստերը և անցյալի մարդկանց սուբյեկտիվ ընկալումը, զգացմունքներն ու հավատալիքները (**Բլոկ Մ., 2018**):

Պատմական սկզբնաղբյուրների հետ աշխատանքն ավագ դպրոցականների համար պետք է կազմակերպել ոչ թե ինտուիտիվ (ներըմբռնողական), այլ կառուցվածքային մոտեցմամբ, ինչն էլ հերթագայական քայլերով կզարգացնի նրանց քննադատական հմտություն: Ժամանակակից մանկավարժության մեջ առանձնացվում են մի քանի գործնական-հիմնական փուլեր, որոնք օգնում են սովորողին ինքնուրույն բացահայտել աղբյուրի արժեքը, կողմնակալությունը և դերը պատմական համատեքստում:

Դրանք նպաստում են կրթական հետևյալ նպատակների իրականացմանը.

- ***Պատմական մտածողության զարգացում***: Աշակերտը պարզապես չի իմանում, թե ի՞նչ է եղել, այլ սկսում է հասկանալ՝ ինչո՞ւ է դա եղել, ի՞նչ համատեքստում և ի՞նչ ազդեցություն է ունեցել:
- ***Քննադատական մոտեցման ձևավորում***: Ցանկացած պատմական սկզբնաղբյուր վերլուծելիս աշակերտը հարցադրում է՝ ո՞վ է հեղինակը, ի՞նչ նպատակով է ստեղծվել աղբյուրը, որքանո՞վ է այն վստահելի և համապարփակ:
- ***Մեդիագրագիտության խթանում***: Պատմական աղբյուրների հետ աշխատանքը սովորեցնում է տարբերել փաստն ու մեկնաբանությունը, բացահայտել կողմնակալությունը և տեղեկատվական ազդեցությունը:
- ***Քաղաքացիական գիտակցություն***: Բախվելով տարբեր ժամանակաշրջանների փաստաթղթերի և պատմական իրավիճակների հետ՝ աշակերտները զարգացնում են իրավագիտակցություն, արժեքային ընկալում, ժողովրդավարական մտածողություն:

Այսպիսով, պատմական սկզբնաղբյուրների ներառումը ուսումնական գործընթացում ուղղակիորեն նպաստում է նաև ընդհանուր կարողությունների ձևավորմանը, որոնց վրա հենվում է ժամանակակից կրթական համակարգը՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային չափանիշներով (օրինակ՝ PISA, UNESCO և այլն) (**OECD. 2018**):

Պատմական փաստաթղթերի հետ աշխատանքի հմտությունների զարգացման փուլային գործընթաց

Միջին դպրոց (5-9 դասարաններ): Այս տարիքում աշակերտները սկսում են խորությամբ ուսումնասիրել սկզբնաղբյուրների տեսակները, ինչպես նաև՝ սովորում համեմատել տարբեր աղբյուրներ, գտնել միօրինակություններ ու տարբերությունները: Կարևոր է զարգացնել նրանց քննադատական մտածողությունը՝ սովորեցնելով հարցադրումներ անել աղբյուրի հեղինակի, ստեղծման ժամանակի և նպատակի վերաբերյալ:

Ավագ դպրոց (10-12 դասարաններ): Նախորդ փուլերում ձեռք բերված հմտությունների հիման վրա աշակերտները կարող են անցնել ավելի բարդ վերլուծությունների: Նրանք պետք է կարողանան՝

- համադրել սկզբնաղբյուրներից ստացած տեղեկությունները,
- ձևակերպել սեփական եզրահանգումները՝ հիմնված բազմակողմանի վերլուծության վրա,
- կատարել հետազոտական աշխատանք՝ օգտագործելով տարբեր տեսակի սկզբնաղբյուրներ:

Աստիճանական այս մոտեցումը թույլ է տալիս աշակերտներին զարգացնել վերլուծական և հետազոտական հմտությունները: Յուրաքանչյուր հաջորդ փուլում նախորդ փուլի հմտությունները խորացվում և ընդլայնվում են: Այս մեթոդը նման է աստիճանների կառուցման, որտեղ յուրաքանչյուր նոր աստիճան հենվում է նախորդի վրա՝ միաժամանակ հիմք դառնալով հաջորդի և ապահովելով կայուն հիմք ավագ դպրոցում առավել բարդ վերլուծական աշխատանքների համար: Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր տարիքային խմբի համար պետք է ընտրվեն

համապատասխան բարդության և թեմատիկայի սկզբնաղբյուրներ: Սա օգնում է պահպանել աշակերտների հետաքրքրությունը և շարժառիթը՝ միաժամանակ զարգացնելով նրանց վերլուծական հմտությունները:

Պատմության ուսուցիչը ոչ միայն պետք է կենտրոնանա սովորողներին փաստերը ներկայացնելուն, այլև դիտարկի դրանք որպես մտածողության զարգացման միջոց: Այսպես, պատկերացնենք իրավիճակ, որտեղ սովորողները կարող են քննադատաբար մտածել և միջանկյալ կապ հաստատել երկու իրադարձությունների միջև: Արդյունքում՝ պատմության ուսուցումն ու սովորելը կլինի ավելի հետաքրքիր, ինչն էլ կարող է առավել գրավել ուսանողների հետաքրքրությունները (**Wineburg S., 2001**):

Պատմության դասավանդման ժամանակակից մոտեցումը հիմնված է այն տեսական-գործնական մոտեցման վրա, որ վերլուծական և քննադատական մտածողությունը հնարավոր է զարգացնել վաղ տարիքից՝ ակտիվ ուսուցման միջոցով: Այս մեթոդական մոտեցումը փոխում է շեշտադրումը փաստերն անգիր անելուց դեպի պատմական գիտելիքի կառուցման գործընթացը հասկանալը: Փաստենք, որ կատարված մի շարք հետազոտություններ ապացուցում են, որ հնարավոր է վաղ տարիքից զարգացնել թե՛ վերլուծական և թե՛ քննադատական մտածողություն:

Էմպիրիկ հետազոտությունները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ սկզբնաղբյուրների համակարգված կիրառումը դասարանային միջավայրում էապես նպաստում է պատմական մտածողության զարգացմանը: Օրինակ՝ Սեմ Ուայնբուրգի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկսնակների և փորձագետների տարբերությունները պայմանավորված են ոչ այնքան գիտելիքների ծավալով, որքան պատմական գիտելիքի կառուցման ռազմավարությամբ, ինչը փաստում է վաղ փուլում սկզբնաղբյուրների հետ աշխատանքի կարևորությունը: Նմանատիպ արդյունքներ են արձանագրել նաև Քեյ Յանգը և Գերթ Լայնհարդը, որոնք, մեկ տարվա ընթացքում հետևելով աշակերտների՝ սկզբնաղբյուրների վրա հիմնված առաջադրանքների պատասխանների զարգացմանը, արձանագրեցին անցում տեղեկատվության

պարզ վերարտադրումից դեպի փաստարկված վերլուծություն: Այս ուսումնասիրությունները վկայում են, որ պատմության արդյունավետ ուսուցումը պետք է հիմնված լինի տարատեսակ սկզբնաղբյուրների նպատակային կիրառության վրա՝ ապահովելով սովորողների աստիճանական առաջընթացը փաստերի հիշողությունից դեպի ապացույցների վրա հիմնված պատմական դատողություն (**Dutt-Doner K., Cook-Cottone C., Allen S., 2007**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ ավագ դպրոցում պատմական սկզբնաղբյուրների կիրառումը պետք է դիտարկել ոչ թե միայն օժանդակ մեթոդ, այլև պատմության ուսուցման կառուցվածքային առանցք: Սկզբնաղբյուրների հետ փուլային և քննադատական աշխատանքը հնարավորություն է տալիս պատմության դասը տեղափոխել փաստերի փոխանցումից դեպի պատմական գիտելիքի գիտակցված կառուցում՝ նպաստելով սովորողների քննադատական մտածողության, հետազոտական գրագիտության, մեդիագրագիտության և քաղաքացիական գիտակցության զարգացմանը՝ համահունչ ՀՀ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:

Վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ արդյունավետ արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է կառուցվածքային մեթոդաբանություն՝ արտաքին և ներքին քննադատության համադրությամբ, ինչպես նաև՝ ուսուցչի համակարգված աջակցություն և հմտությունների շարունակական զարգացում միջինից դեպի ավագ դպրոց: Միաժամանակ, աշխատանքը մատնանշում է հայկական կրթական միջավայրում նման գործիքակազմի պակասը և առաջարկում տեսականորեն հիմնավորված, գործնականում կիրառելի մոտեցումներ:

Այսպիսով, սկզբնաղբյուրների նպատակային կիրառումը ոչ միայն բարձրացնում է պատմության ուսուցման որակը, այլև ձևավորում է քննադատաբար մտածող և պատասխանատու քաղաքացու նախադրյալներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչ (ՀՊՉ)**, Կետ 11, Կետ 14, Կետ 16, Կետ 17, Կետ 24, Կետ 27, Կետ 39, Կետ 41 // https://www.arlis.am/hy/acts/149788 (մուտք՝ 01.02.2026 թ.):
2. **Բլոկ Մ. (2018)**, Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը, Երևան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, «Անտարես» հրատ., էջ 72:
3. **Dutt-Doner K. M., Cook-Cottone C., Allen S. (2007)**, Improving Classroom Instruction: Understanding the Developmental Nature of Analyzing Primary Sources, RMLE Online, Volume 30, No. 6, November 6, p. 7 // Improving Classroom Instruction (մուտք՝ 01.02.2026 թ.).
4. **Library of Congress. (2020)**. What is a primary source? // https://ask.loc.gov/faq/303148 (մուտք՝ 01.02.2026 թ.):
5. **OECD (2018)**. PISA 2018 Global Competence: Global Competence for an Inclusive World. OECD Publishing // https://www.oecd.org/en/about/programmes/pisa.html (մուտք՝ 01.02.2026 թ.).
6. **Seixas P., Morton T., Colyer J., & Fornazzari S. (2013)**, *The big six: Historical thinking concepts*. Nelson Education, pp. 2-3 // https://drive.google.com/file/d/1wrDfHfEwd9iwDz-Ah5wSmK02KLtfBaob/view (մուտք՝ 01.02.2026 թ.).
7. **What are the differences?** // https://crk.umn.edu/library/primary-secondary-and-tertiary-sources (մուտք՝ 01.02.2026 թ.).
8. **Where are Primary Sources?** // https://library.shu.edu/primarysources (մուտք՝ 01.02.2026 թ.).
9. **Wineburg S. (2001)**, Historical Thinking and Other Unnatural Acts: Charting the Future of Teaching the Past. Temple University Press, pp. 29-40 // https://drive.google.com/file/d/1aOLPCXuaVjVoZ8CxLU6RDb5uRBNvxme9/view (մուտք՝ 01.02.2026 թ.)

REFERENCES

1. **HH hanrakrt'owt'yan petakan chap'oroshich (HPCh) /State Standard of General Education of the Republic of Armenia (SSGE)/**, Clauses 11, 14, 16, 17, 24, 27, 39, 41. Available at: https://www.arlis.am/hy/acts/149788 (Accessed: February 1, 2026).
2. **Bloch, M. (2018),** Patmowt'yan pashtpanakan kam patmabani arhesty' The Historian's /Craft (Apologie pour l'histoire ou Métier d'historien)/, Yerevan, Sargis Khachents, Printinfo, Antares Publishing, p. 72.
3. **Dutt-Doner, K. M., Cook-Cottone, C., & Allen, S. (2007).** Improving Classroom Instruction: Understanding the Developmental Nature of Analyzing Primary Sources. *RMLE Online*, Volume 30, No. 6, p. 7. Available at: [Link] (Accessed: February 1, 2026).
4. **Library of Congress (2020).** *What is a primary source?* Available at: https://ask.loc.gov/faq/303148 (Accessed: February 1, 2026).
5. **OECD (2018).** *PISA 2018 Global Competence: Global Competence for an Inclusive World*. OECD Publishing. Available at: https://www.oecd.org/en/about/programmes/pisa.html (Accessed: February 1, 2026).
6. **Seixas, P., Morton, T., Colyer, J., & Fornazzari, S. (2013).** *The Big Six: Historical Thinking Concepts*. Nelson Education, pp. 2-3. Available at: [Google Drive Link] (Accessed: February 1, 2026).
7. **University of Minnesota Crookston Library.** *What are the differences? [Primary, Secondary, and Tertiary Sources]*. Available at: https://crk.umn.edu/library/primary-secondary-and-tertiary-sources (Accessed: February 1, 2026).
8. **Seton Hall University Libraries.** *Where are Primary Sources?* Available at: https://library.shu.edu/primarysources (Accessed: February 1, 2026).

9. **Wineburg, S. (2001).** *Historical Thinking and Other Unnatural Acts: Charting the Future of Teaching the Past*. Temple University Press, pp. 29-40. Available at: [Google Drive Link] (Accessed: February 1, 2026).

Наира Ерканян

Методологические особенности использования исторических источников в средней школе (согласно теории)

Заключение

Ключевые слова и выражения: Источники, первичные и вторичные источники, чтение и анализ источников, применение первичных источников, методологическая специфика, теоретический и практический подход.

В контексте современных образовательных требований преподавание истории рассматривается не как механическая передача фактов, а как средство развития критического мышления учащихся, аналитических навыков и исторической эмпатии. Настоящая статья направлена на теоретическое и практическое обоснование методологических особенностей использования исторических первоисточников в процессе преподавания истории в старшей школе.В рамках исследования анализируются поэтапные формы работы как с первичными, так и со вторичными источниками - от простого воспроизведения информации до аргументированного анализа и построения собственных интерпретаций.

В статье также подчеркивается тенденции, направленные на достижение конечных результатов и развитие ключевых компетенций, закрепленных в Государственном стандарте общего образования Республики Армения. В частности, обосновывается, что исследовательская работа с первоисточниками способствует развитию у учащихся навыков самопознания, гражданского сознания и медиаграмотности.

Представленная в статье методологическая модель опирается на международные концепции исторического мышления, предлагая систему вопросов для внешней и внутренней критики источников. Она позволяет восполнить существующий методологический пробел в армянской образовательной системе и обеспечить переход к компетентностно-ориентированному обучению.

Naira Yerkanyan

Methodological features of the use of historical sources in high school (according to theory)

Conclusion

Keywords and expressions: Sources, primary and secondary sources, source reading and analysis, primary source application, methodological specificity, theoretical and practical approach.

In the context of contemporary educational requirements, history teaching is viewed not as the mechanical transmission of facts, but as a means of developing students' critical thinking, analytical skills, and historical empathy. This article aims to provide a theoretical and practical justification of the methodological features of using historical primary sources in the process of teaching history in upper secondary school.Within the framework of the study, staged approaches to working with both primary and secondary sources are analyzed, ranging from simple reproduction of information to evidence-based analysis and the construction of students' own interpretations.

The article also highlights trends aimed at achieving learning outcomes and developing key competencies defined in the State Standard of General Education of the Republic of Armenia. In particular, it is argued that research-based work with primary sources contributes to the development of students' self-awareness, civic consciousness, and media literacy.

The methodological model presented in the article is based on international concepts of historical thinking and proposes a system of questions for the external and

internal criticism of sources. It helps address the methodological gap in the Armenian educational system and supports the transition toward competency-based education.

Նաիրա Երկանյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ դպրոցականների պատմական մտածողության ձևավորման մեթոդական համակարգի զարգացման ուղիներ, պատմական սկզբնաղբյուրների կիրառման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում: Հեղինակ է գիտական 2 հոդվածի: yerkanyannaira-phd24@aspu.am, ORCID:0009-0004-2960-178X

Наира Ерканян - соискатель кафедры всемирной истории и методики её преподавания Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна (АГПУ). Научные интересы: пути развития методической системы формирования исторического мышления у школьников, особенности применения исторических источников в общеобразовательной школе. Автор 2 научных статей. yerkanyannaira-phd24@aspu.am

Naira Yerkanyan - PhD applicant at the Department of World History and Methods of Teaching History at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.Research interests include the development of methodological systems for fostering students' historical thinking, as well as the specific features of using historical sources in general education schools. Author of 2 scientific articles.yerkanyannaira-phd24@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 19.02.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 27.03.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.